Գրիգոր Բրուտեան

«ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐԻ» ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ գրահրատարակութեան առաջնեկների ժամանակը թէպէտ ընդհանուր առմամբ յայտնի է, այդուհանդերձ Ցակոբ Մեղապարտի տպած գրքերի աշխարհ գալու ճշգրիտ տարեթուերն ու հերթականութիւնը հայագիտութեան մէջ քննութեան նիւթ են դարձել բազմաթիւ անգամներ: Պատճառն այն է, որ Ցակոբի տպած 5 (կամ 6) գրքերից միայն մեկն է («Պատարագատետրը»), որ ունի հրատարակողի թողած յիշատակարան՝ տպագրութեան տարեթուով: Դրանից զատ, «Պարզատումարն» էլ հէնց սկզբում ունի տարեթուի յիշատակութիւն:

«Պատարագատետրի» յիշատակարանում իբր այդ գրքի հրատարակման տարեթիւ տրուած է Հայոց ՉԿԲ (962) տարին[1]: Իսկ «Պարզատումարի» սկզբում նշուած է Հայոց 961 թիւը, որն այդ օրացոյցի առաջին տարին է[2]: Միեւնոյն ժամանակ, Ռ. Իշխանեանը, կատարելով Ցակոբի տպած գրքերի զարդաժապաւէնների մաշուածութեան մանրամասն քննութիւն, տալիս է այդ գրքերի տպագրութեան հետեւեալ հերթականութիւնը. 1. Ուրբաթագիրք (հնարաւոր է՝ սրանից յետոյ՝ մեզ անյայտ մի գիրք եւս), 2. Պատարագատետր, 3. Աղթարք, 4. Պարզատումար, 5. Տաղարան, 6. Վասն Գանի[3]: Ընդ որում, Իշխանեանի կիրառած եղանակը լուրջ հիմնաւորուած է, եւ այդ կերպ ստացուած արդիւնքներին չհաւատալու հիմք չունենք: Եւ քանի որ Հայոց 962 թուին տպուած «Պատարագատետրը» տպուել է 961 թուով սկսուող «Պարզատումարից» առաջ, բնականաբար եզրակացւում է, որ Հայոց 961 թիւը «Պարզատումարի» հրատարակութեան տարին չէ[4]:

Այդուհանդերձ, փորձ է արուել մերժելու այս եզրակացութիւնը եւ «Պարզատումարի» տպագրութեան տարի համարելու Նոյնիսկ 1511 թուականը (Հայոց 961= Փրկչ. 1512, եւ իբր օրացոյց, դրանից էլ մի տարի առաջ լոյս տեսնելու անհրաժեշտութիւնից ելնելով[5]):

Փորձեր են արուել նաեւ «Պարզատումարի» 961 Հայոց թիւը Փրկչական 1513 տարուն հաւասարեցնելու՝ պատճառաբանելով, որ Հայոց թուականից Փրկչա-

---

[1] «Պատարագատետրի» յիշատանարանն է. «Գրեցաւ սուրբ տառս ի ՉԿԲ ի աստուածապահ քաղաքս Վենետիկ՝ Ճռանկստեան ձեռամբ մեղապարտ Ցակոբին. ով որ կարդայք մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»:

[2] «Պարզատումարը» համառօտ կազմուած բազմամեայ օրացոյց է, որի համար որպէս առաջին տարի նշուած է Հայոց 961 թիւը: Այս մասին աւելի մանրամասն՝ տե՛ս ստորեւ:

[3] «Վասն Գանի» անունն է կրում միայն մի պրակ. թէպէտ սա մտնում է «Ուրբաթագրքի» մէջ, այդուհանդերձ, ըստ Ռ. Իշխանեանի հետազօտութեան, այն տպուել է Ցակոբի միւս գրքերից յետոյ: Տե՛ս Ռ. Իշխանեան, «Բանբեր Մատենադարանի», հ. 7, էջ 275–295, 1964, հ. 8, էջ 183–189, 1967, նաեւ՝ Նոյնի Հայ գրքի պատմութիւն, հ. 1 «Հայաստան», Եր. 1977, էջ 158, 160, ևն:

[4] Տե՛ս Ռ. Իշխանեան, նշ. աշխ.:

[5] Արամ Բաբայեան, Ո՞րն է վերջապէս Հայ առաջին տպագիր գիրքը, «Գրքերի աշխարհ», թիւ 3, 1980:

կանին անցնելու համար հարկ է գումարել 552 տարի (961+552=1513)[6]: Այստեղ էլ Հայոց 961-ը Փրկչ. 1513-ի վերածելու համար հիմք են հանդիսացել նույն «Պարզատումարում» տրուած բանաձեւերը՝ տարեթիւը Աշխարհի արարչութիւնից եւ Քրիստոսի ծնունդից հաշուելու համար: Այս 1513 թուականը, իբր Հայ գրաւոր-տարակութեան սկզբի տարի, պաշտպանել են շատ անուանի բանասէրներ[7]: Այդուհանդերձ, որպէս Հայ գրատպութեան սկիզբ, «Պատարագատետրի» 962 Հայոց թուականից զատ, այս 1513 թիւը տոմարական ոչ մի այլ հիմք չունի: Հայ տպագրութեան սկիզբը 1513-ին դնող Ստ. Մալխասեանցն էլ «Պարզատումարի» սկզբի Հայոց 961 թիւը դնում է Փրկչ. 1512-ին (Հայոց 961-ի Նաւասարդի 1=Փրկչ. 1512 թ. Նոյեմբերի 13)[8]:

Այստեղ մեր խնդիրը չէ Հայ տպագրութեան սկզբնաւորման տարին պարզելը. միայն հարկ եմ համարում որոշ տոմարական պարզաբանում տալու այս 961 Հայոց թուի վերաբերեալ:

Բանն այն է, որ «Պարզատումարի» սկզբում յիշատակուած Հայոց 961 թուականը Փրկչական տարիների հետ նոյնացնելու փորձ արած բոլոր հեղինակներն էլ ելակէտ են ընդունել հէնց միայն 961 թիւը եւ այս կամ այն կերպ ջանացել հիմնաւորել, որ Փրկչականին անցնելու համար պէտք է դրան գումարել 551 կամ 552 տարի: Զքննելով բոլոր առանձին դէպքերը, նկատենք, որ այս տարեթուի խնդիրը կարելի է պարզել շատ դիւրին եւ յուսալի կերպով՝ հիմնուելով հէնց նոյն «Պարզատումարի» պարունակած տոմարական տեղեկութիւնների վրայ:

«Պարզատումարը» համառօտ կազմուած բազմամեայ օրացոյց է, ուր իւրաքանչիւր տարուայ համար տրուած են մի քանի ամենակարեւոր տոմարական տուեալներ (տանուտէր, եօթներեակ, ամսամուտեր, որոշ կարեւորագոյն տօներ եւն)՝ կախուած տարուայ տարեգրից: Տարեգիրներն էլ փոխւում են Ա-ից Փ: Իսկ ամենասկզբում էլ (էջ 2) կայ աղիւսակ՝ տարեգրերի եւ տարուայ տանուտէրերի համապատասխանութեան (տե՛ս նկար 1): Երրորդ էջից էլ սկսւում է բուն Պարզատումարը: Այստեղ ամենասկզբում դրուած է Պարզատումարի ուղեցոյց-բանալին, որ տալիս է տարեթիւ-տարեգիր համապատասխանութիւնը եւ բացատրում շարունակելու կարգը. «Ինն հարիւր ու վաթսունմէկն. գիրն Նուն է. և տանուտէրն ի վերեւն Կարիճն է. և այլն կարգաւ երթայ...» (տե՛ս նկար 2): Այս հատուածում տարին բնորոշուած է տարեթուով ու, բացի այդ, նաեւ երկու այլ տոմարական չափանիշներով: Տարեթուից յետոյ երկրորդը տարեգիրն է, որ տուեալ դէպքում հաւասար է Ն-ի: Իսկ երրորդը՝ տարուայ տանուտէրն է, որն էլ այս դէպքում Կարիճն է:

Տարեգիրը մի թիւ է, որ ցոյց է տալիս գարնանամուտից մինչեւ Զատիկ եղած օրերի քանակը, եւ, քանի որ Զատիկն ունի 35 օրուայ շարժականութիւն, տարեգիրն էլ փոփոխւում է մէկից մինչեւ երեսունհինգ (թէպէտ՝ ոչ թուերի աճման կամ նուազման հերթականութեամբ): Հայկական տոմարում ընդունուած է եղել տարեգիրը նշանակել Հայոց այբուբենի տառերով, բայց ոչ թէ նրանց սովորական թուային արժէքներով, այլ այբուբենի մէջ իրենց հերթական տեղի արժէքով: Այսպէս. Ա=1,... Թ=9, Ժ=10, Ի=11, Լ=12,... Փ=35:

---

6 Բ. Լ. Զուգասցեան, «Պարզատումարի» տպագրութեան թուականը, «Բանբեր Մատենադարանի», հ. 14, էջ 240-250, 1984, նոյնը նաեւ՝ Պարզայտումար, «Գինդ» հրատ. Երեւան, 1996 գրքի յառաջաբանում. էջ Է-ԻԹ:

7 Օրինակ՝ Ստ. Մալխասեանց, Ցօբելեանի տօնի օրը, «Մշակ», 1912, թիւ 57:

8 Տե՛ս Ստ. Մալխասեանց, նշ. աշխ.:

Այս կերպ Ն=22: Այսինքն, եթէ տարուայ տարեգիրը Ն է, ուրեմն Զատիկն այդ տարի գարնանամուտից 22 օր յետոյ է, որ կը լինի Ապրիլի 12-ին (հաշուած Մարտի 21-ից): Իրօք, «Պարզատումարի» մէջ էլ (էջ 48) Ն տարեգրի տակ նշուած է, որ տուեալ տարուայ Զատիկը Ապրիլի 12-ին է:

Երրորդը տարուայ տանուտէրն է: Սա էլ 12 յայտնի կենդանակերպերից այն է, որը համապատասխանում է տուեալ տարուն: Տանուտէրները հերթականութեամբ փոխւում են Խոյից Ձկներ (1-ից 12):

Արդ, փորձենք տոմարական այս երեք մակաչափերով (Հայոց թուականով, տարեգրով ու տանուտէրով) որոշել Պարզատումարի սկզբում նշուած տարին: Հայոց թուական կոչուածը Հայոց Մեծ թուականն է, որից Փրկչականին անցնելը միշտ չէ, որ միանշանակ է: Տարբեր դէպքերում Փրկչական և Հայոց թուականների տարբերութիւնը տարբեր է՝ 551 կամ 552 տարի: Ուստի միայն այս մի տոմարական տուեալի վրայ հիմնուելով չենք կարող միանշանակ որոշել դրան համապատասխան Փրկչական տարին: Փորձենք տարեթուի հետ միասին քննել նաեւ տարեգիրը:

Քանի որ Պարզատումարի սկզբում Հայոց 961 թուի համար տրուած է Ն տարեգիրը, ուրեմն պէտք է այդ տարուայ Զատիկը եղած լինի Ապրիլի 12-ին: Ըստ Ֆ. Գինցէլի կազմած զատկացուցակի, Ապրիլի 12-ին Զատիկ եղել է Փրկչական 1506 եւ 1517 թուերին, իսկ այդ տարիների միջեւ Ապրիլի 12-ին Զատիկ չի եղել[9]: Այսինքն Ն տարեգիրն այս դէպքում «իր տեղում» չէ: Հարցը պարզւում է նոյն Պարզատումարի բանալիի օգնութեամբ: «Ցորժամ գիրն Քէն լինի, դու զՓիւրն բանեցոյ ի նահանջի տարին. յորժամ Փիւրն լինի. զՀիւսն բանեցոյ. յորժամ ի Մարտն մտանես. և այլն կարգաւ երթայ» (տե՛ս նկար 2): Այսինքն նահանջ տարիներին պէտք է Մարտ ամսից սկսեալ տարեգիրը մէկով պակաս լինի: Հայոց Մեծ թուականի 961 տարին պէտք է նահանջ տարի համարել[10], ուրեմն եւ պէտք է այդ տարուայ համար տարեգիրը Ն-ի փոխարէն վերցնել Ց, որ կը տայ այդ տարուայ Զատկուայ համար Ապրիլի 11-ը: Իրօք, Հայոց ՆԾԲ (452) թուից յետոյ, երբ Նաւասարդի մէկը զուգադիպել է Ցուլեան 1004 թ. Մարտի 20-ին, Հայոց օրացոյցում խառնաշփոթ է առաջացել, եւ նահանջ տարիները, որ մինչ այդ զոյգ տարեթուեր ունէին, դառնում են կենտ տարեթուով: Այս նոյնը հաստատւում է նաեւ Ցովհաննէս Սարկաւագի տոմարական աշխատութիւններով: Նրա տոմարական Պատճէնում կարդում ենք. «Ի Մեծ թուականէն ՇԼԳ (553) ի բաց երթ՝ Փոքր է»[11]: Ուրեմն, Հայոց Մեծ թուականի 961-ը Փոքր թուականով կը լինի 961-533=428: Իսկ Սարկաւագի կազմած ՕԼԲ բոլորակում ՆԻԸ (428) Փոքր թուականը իրօք նահանջ տարի է[12]: Եւ այս ՕԼԲ աղիւսակում Փոքր թուականով ՆԻԸ (428) թուի Զատիկն էլ Ապրիլի 11-ին է:

---

9 Տե՛ս Հ. Ս. Բաղալեան, Օրացոյցի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 440:

10 Սա կախուած է նրանից, թէ ինչպէս ենք ընկալում Հայոց թուականը: Եթէ դա ընկալենք իբր Փ. 552 թ. Յուլիս 11-ից սկսուող 365-օրեայ անընդհանջ տարիներով եւ շարժական տարեմուտով օրացոյց, ապա դրա 961 թուականը իրօք պիտի նահանջ տարի լինի, քանի որ սկսեալ Փ. 1004 թուից, երբ Հայոց Նաւասարդի 1-ը անցել է գարնանամուտի օրով (Մարտի 20-ով), հայկական օրացոյցում աւելացել է մի «եկամուտ» տարի, որով եւ նահանջ տարիներ են դարձել կենտ տարիները: Եթէ Հայոց թուականն ընկալուի իբր Փ. 553 թ. Յունուարից սկսուող, 365.25-օրեայ նահանջատր տարիներով եւ կայուն տարեմուտով օրացոյց, ապա նահանջ տարի պիտի համարել Հայոց 960 թուականը:

11 Ա. Աբրահամեան, Ցովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւանի Համալսարանի հրատ., Եր. 1956, էջ 205:

12 Տե՛ս անդ. էջ 198:

Այսինքն, ըստ «Պարզատումարի» ցուցմունքի, Հայոց 961 թիւը պիտի համապատասխանի 428 Փոքր թուականին, որ նահանջ տարի է, տարեգիրն էլ մինչեւ Մարտ՝ Ն է. Մարտից սկսեալ՝ Ց, որով եւ Զատիկն էլ Ապրիլի 11-ին է: Իսկ ըստ վերոյիշեալ զատկացուցակի, Ապրիլի 11-ին Զատիկ եղել է Փրկչ. 1512 թուին[13]: Այսինքն, տարեթուի եւ նշուած տարեգրի համատեղ քննութիւնը ցոյց է տալիս, որ նշուած 961 Հայոց տարին պիտի լինի Փրկչ. 1512 թիւը:

Այս արդիւնքին ներդաշնակ է նաեւ «Պարզատումարի» տուած տարուայ տանուտէրը՝ կարիճ: Յովհ. Սարկաւագի ՕԼԲ աղիւսակում Հայոց Փոքր ՆԻԸ (428) թուականի համար տանուտէր է նշուած իրօք կարիճը: Սարկաւագ վարդապետի տոմարական Պատճէնում տանուտէրը հաշուելու կանոնը եւս տալիս է սրան ներդաշնակ արդիւնք: «Տանուտէր տարոյ այսպէս արա. կալ զթվականն զմեծ, Է (7) ի վերայ ած և երթ ԺԲ (12), որ մնայ՝ զսկիզբն ի Խոյէն արա և տուր կենդանակերպսն ԱԱ (մի մի). ուր թիւն սպառի. այն է տանուտէր: ...Դարձեալ կալ զփոքր թուականն՝ թիւ մի պակաս. և երթ ԺԲ (12)-ԺԲ (12). որ մնա՝ սկիզբն ի Խոյէն արա եւ այն է»[14]: Փոքր թուականով ըստ այս բանաձեւի հաշուելով, 428 թուի համար ստացւում է տանուտէրը Կարիճ: Իսկ Մեծ թուականի համար մեր դէպքում սա ուղղակիօրէն կիրառելի չէ: Հարկ է այս բանաձեւով աշխատելիս Մեծ թուականից (երբ այն մեծ է 452-ից) հանել մէկ «եկամուտ» տարին. որ յառաջ է եկել Հայոց ՆԾԲ թուից յետոյ[15]: Եթէ կատարենք համապատասխան շտկումը, 961-ն էլ կը տայ նոյն տանուտէրը՝ Կարիճ:

Աւելացնենք մի քանի տուեալ եւս: «Պարզատումարի» Գ պրակի վերջին էջում (էջ 48) Ն տարեգրի դիմաց տրուած է եօթներեակը՝ Դ, Ցայտնութեան օրը՝ երեքշաբթի: Քանի որ խօսքը Յունուար ամսի մասին է, յարկ չկայ տարեգիրը մէկով պակասեցնելու: Սարկաւագի ՕԼԲ-ում էլ իրօք, ՆԻԸ (428) տարուայ դիմաց դրուած է եօթներեակ՝ Դ. Ե, Ցայտնութեան օրը՝ Գ (երեքշաբթի): Այստեղ երկու եօթներեակներից առաջինը (Դ) վերաբերում է Յունուար, Փետրուար ամիսներին, իսկ երկրորդը (Ե) Մարտից Դեկտեմբեր ամիսներին: Սա համընկնում է «Պարզատումարի» Ն տարեգրի Դ եօթներեակին, քանի որ իբր նահանջ տարի, Դ եօթներեակը պիտի կիրառուի միայն առաջին երկու ամիսների համար: Այս եւս հաստատում է, թէ ի դէմս գրքի սկզբում նշուած 961 Հայոց թուի, ունենք Հայոց Փոքր տոմարի ՆԻԸ (428) տարին:

---

13 Տե՛ս Հ. Ս. Բաղալեան, նշ. աշխ.:

14 Ա. Աբրահամեան, նշ. աշխ., էջ 204:

15 Յովհ. Սարկաւագի «Պատճէն Տոմարի» աշխատութեան մէջ Մեծ եւ Փոքր թուականներով տայուայ տանուտէրը հաշուելու համար տրուած բանաձեւից (էջ 204) հետեւում է, որ Հայոց Մեծ եւ Փոքր թուականների տարբերութիւնը պէտք է լինի 532: Իրօք, եթէ նշանակենք Մեծ թուականը N, Փոքր թուականը n, տանուտէրը T-ով, ապա այդ բանաձեւերը կը տան. N+7=12a+T; եւ n-1=12b+T, որտեղից՝ (N-n)+8=12(a-b), ուր a-ն ու b-ն, բնական թուեր են: Ուստի (N-n)+8-ը 12-ի պատիկ թիւ է: N-n=533-ը այս պայմանին չի բաւարարում, իսկ N-n=552 -ը բաւարարում է: Ուրեմն, ըստ այս բանաձեւերի, Մեծ եւ Փոքր թուերի տարբերութիւնը պիտի լինի 532: Այնինչ այդ նոյն տոմարական Պատճէնում մի քանի տող անց Մեծ եւ Փոքր թուականների տարբերութիւնը տրուած է 533 (էջ 205): Հարկաւ այստեղ թիւրիմացութիւն կայ: Փոքր թուականի համար այս բանաձեւով հաշուած տանուտէրերը համընկնում են Սարկաւագի ՕԼԲ աղիւսակում տրուածներին: Հաւանական է, այս բանաձեւի առաջին մասը (Մեծ թուականով) Սարկաւագինը չէ, այլ վերցուած է մի աւելի հին պատճէնից: Մեծ թուականի համար այս բանաձեւը կիրառել կարելի է միայն «եկամուտ» տարին հանելուց, այսինքն, տարեթիւը մեկով պակասեցնելուց հետոյ (դա վերաբերում է միայն այն տարեթուերին, որոնք Հայոց ՆԾԲ (Փրկչ. 1004) թուից յետոյ են):

Այսպիսով, ի մի բերելով քննութեան արդիւնքները, ստանում ենք, որ «Պարզատումարի» սկզբում նշուած Հայոց 961 թիւը, Ն տարեգրով եւ Կարիճ տանուտէրով, համապատասխանում է Հայոց Փոքր տոմարի ՆԻԸ (428) թուականին, որ նահանջ տարի է. Զատիկն էլ՝ Ապրիլի 11-ին[16]: Եւ սա էլ միարժէքօրէն համապատասխանում է Փրկչական 1512 թուին: Ուրեմն «Պարզատումարում», որպէս առաջին տարի, նշուած է Փրկչ. 1512 թիւը[17]: Որ սա իրօք այս օրացոյցի առաջին տարին է, երեւում է երկու բանից: Նախ «Պարզատումարի» մէջ տարիները տրուած են ըստ տարեգիրների, եւ տարեգիրներն էլ տրուած են այբբենական կարգով՝ Ա-ից Փ: Այս կարգից դուրս, Ա տարեգրից առաջ, տրուած է վերոբերեալ լիշատակութիւնը տարեթուով եւ միւս տոմարական մակաչափերով (տե՛ս նկար 2): Բացի այդ, «Պարզատումարի» երկրորդ էջում բերուած է աղիւսակ տարեգիրների և տարուայ տանուտէրերի համապատասխանութեան (նկար 1): Ահա այս աղիւսակն էլ սկսւում է Ն տարեգիր եւ Կարիճ տանուտէր ունեցող տարիով (վերեւի ձախ անկիւնում), որ էլի նոյն 1512 Փրկչ. տարին է:

Անշուշտ սա բավարար չէ եզրակացնելու համար, թէ սոյն գիրքը տպուել է 1512-ին: Բայց կարելի է մտածել, որ տպագրիչը իր գործն սկսելուց ծրագրած է եղել այնպէս տպել գիրքը, որ դա կիրառուէր հէնց 1512-ից (այլապէս անիմաստ է այդ տարուայ յատուկ նշումը սկզբում եւ աղիւսակն այդ տարուց սկսելը): Հնարաւոր է, թակոբը «Պարզատումարի» ձեռագիրը հրատարակութեան է պատրաստել 1512 թուից առաջ (այդ տարուայ համար լոյս ընծայելու հաշուարկով), բայց հանգամանքների բերումով տպագրութիւնը ձգձգուել է, եւ «Պարզատումարը» լոյս է տեսել 1513 թուին տպուած «Պատարագատետրից» յետոյ: Ամեն դէպքում անկասկած է, որ «Պարզատումարի» սկզբում նշուած Հայոց 961 թուականը համապատասխանում է Փրկչ. 1512-ին: Սա, իր հերթին, նշանակում է նաեւ, որ «Պատարագատետրի» լիշատակարանում թակոբի տուած Հայոց ՉԿԲ (962) տարին էլ պիտի համապատասխանի Փրկչ. 1513-ին:

---

16 Ինչպէս ժամանակին ցոյց է տրուել, Սարկաւագի ՕԼԲ բոլորակում ներկայացուած Հայոց Փոքր թուականի տարիները սկսւում են ոչ թէ Օգոստոսի 11-ից, այլ Յունուարից (Գր. Բրուտեան, «Էջմիածին», Դ-Ե, 1994, էջ 103-104): Ըստ այսմ, Փոքր թուականի տարիները համընկնում են Յուլեան տարիների հետ, եւ կարիք չկայ այս հայկական տարին Հռոմէականի կէսից հաշուելու:

17 Ինչ վերաբերում է այն տոմարական «փաստարկներին», որոնցով փորձ է արուել հիմնաւորել «Պարզատումարի» 961 թիւը Փրկչ. 1513 տարին լինելը (տես Բ. Զուգասզեան, նշ. աշխ.), նկատենք, որ դրանք արդիւնք են թիւրիմացութեան: Այդ աշխատութիւններում Հայոց 961=Փրկչ. 1513-ը հիմնաւորուել է՝ ելակէտ ընդունուելով «Պարզատումարի» տուած բանաձեւերը (էջ 103-104)՝ տարեթիւը արարչութիւնից ու Քրիստոսի ծննդից հաշուելու համար: Այստեղ ամեն ինչ ճիշդ է արուած: Թիւրիմացութիւն է յարուցել միայն այն, որ Հայ միջնադարեան մատենագրութեան մէջ Քրիստոսի ծննդեան համար ընդունուած ժամանակը չի համապատասխանում այժմ կիրառուող Փրկչական թուականի սկզբին եւ տարբերւում է դրանից երբեմն մէկ կամ երկու տարով (կախուած կիրառութիւնից): Այսինքն, այդ աշխատութիւններում հաշուել է ոչ թէ «Պարզատումարի» նշած Հայոց 961-ին համապատասխանող Փրկչական թուականը (արդի իմաստով), այլ որան համապատասխան Քրիստոսի ծննդեան թուականը՝ ըստ հայ մատենագրութեան մէջ ընդունուած աւանդոյթի:



Նկար 1



Նկար 2